ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 26 » 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0242-23

Ձեռնարկողը՝ «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Արարատ-Վեդի ճ.աջ մ./2/2 Ավշար

Գործունեությունը՝ ***Վանաշենի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0242-23

<26> 12 2023թ.

Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ (Հայտ), Ծրագիր
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Վեդի համայնք, բն.Վանաշեն

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ «երկրաբանական ուսումնասիրություններ», վերը նշված նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ներածական մաս. «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում նախատեսում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Ընկերության կողմից ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներառված է Վեդի խոշորացված համայնքի Վանաշեն բնակավայրի վարչական սահմաններում, զբաղեցնում է 5.27 հա մակերես: Տեղամասի ավազակոպճային խառնուրդի կուտակը գտնվում է ծ.մ 800-1000մ բացարձակ բարձրությունների սահմաններում, տարածվում է գետի ափով մոտ 700մ ձգվածությամբ՝ միջինը 132մ լայնությամբ: Հայցվող տարածքը կապված է Վեդի գետի հունային հատվածի հետ: Գետի հունի մի շարք փլուզումների արդյունքում օգտակար հանածոյի շերտը տեղ-տեղ մերկացած է: Հողաբուսական շերտը բացակայում է, տարածքը ներկայացված է կոպճագլաքարային, ավազակոպճային առաջացումների կուտակումներով: Օգտակար հաստվածքը համատարած հիմնատակում են կավերը: Կավային նյութը ավազային զանգվածում գտնվում է ցրված վիճակում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակով հայցվող տեղամասի հարակից տարածքում իրականացվում է ավազի արդյունահանում:

Նկարագրական մաս. Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, զբաղեցնում է 5.27 հա մակերեսով տարածք: Մոտակա բնակավայրերն են՝ Արարատ քաղաքը, Վեդի, Վանաշեն, Գոռավան, Ավշար գյուղերը: Վանաշեն բնակավայրի մոտակա բնակելի շինությունները հայցվող տարածքից գտնվում են 520մ հեռավորության վրա: Հայցվող տարածքից մոտ 1.2կմ հեռավորության վրա անցնում է Հ-10 հանրապետական նշանակության ավտոճանապարհը:

Տարածքը սահմանափակող եզրային կոորդինատները (ARM WGS-84 կոորդինային համակարգով) ներկայացված են ստորև.

1. 4417201.9074, 8473535.1385
2. 4417161.1657, 8473574.8654
3. 4417400.2689, 8473842.8151
4. 4417648.5817, 8474102.6688
5. 4417702.3605, 8474030.1729
6. 4417655.0365, 8473987.6455
7. 4417638.9229, 8473976.7527
8. 4417621.0114, 8473968.0466
9. 4417590.3097, 8473955.8195
10. 4417563.7271, 8473940.6395
11. 4417555.9011, 8473929.6457
12. 4417550.1619, 8473915.5015
13. 4417554.0784, 8473873.3739
14. 4417552.8866, 8473853.5965
15. 4417543.4066, 8473824.9763
16. 4417529.9067, 8473817.9835
17. 4417509.6495, 8473813.0239
18. 4417483.0396 , 8473815.6510
19. 4417442.4446, 8473784.0282
20. 4417428.8911, 8473770.5866
21. 4417402.4714, 8473739.6405
22. 4417390.7723, 8473722.9121
23. 4417368.5043 , 8473678.6322
24. 4417359.6503, 8473654.2873
25. 4417325.3512, 8473624.1397
26. 4417306.7591, 8473623.7029
27. 4417279.1530, 8473625.5621
28. 4417257.7379, 8473621.8300
29. 4417241.7616, 8473613.8355
30. 4417230.9536, 8473601.3236
31. 4417220.9415, 8473582.9000
32. 4417210.1212, 8473547.2864

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանությունը ներառում է.

- 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով 5.27հա տարածքի վրա տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ՝ գործիքային տեղադրմամբ:
- 5.0-ից 6.5մ խորության 6 հետախուզահորերի անցում, որոնց զբաղեցրած ընդհանուր մակերեսը կկազմի՝ 6մ^2 x 6= 36մ^2, իսկ ծավալը՝ 222մ^3: Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով IV կարգի ամրության ապարներում:
- Բոլոր փորվածքների մանրամասն երկրաբանական փաստագրում, որի աշխատանքների ծավալները կկազմեն՝ 522.5գծ.մ:
- Դաշտային պայմաններում ծավալային զանգվածի որոշում, ինչի համար նախատեսվում է տեղամասում անցած հետախուզափորվածքների 1814.192մ^3 ծավալից 60մ^3-ը օգտագործել կուտակի բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար:
- Աշխատանքների ավարտից հետո հետախուզահորերի ու հետախուզաառուների անցման ժամանակ առաջացած և նմուշարկումից հետո մնացած ԱԿԽ կուտակի հետլցնում: Աշխատանքները կկատարվլու են ձեռքով, առանց լրացուցիչ ծախսերի:
- ԱԿԽ կուտակի որակական ֆիզիկամեխանիկական հատկանիշները պարզաբանելու նպատակով՝ հետախուզական փորվածքների նմուշարկում (12 նմուշ)՝ ակոսային եղանակով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15կգ-ի: Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում: Քիմիական և մինեռոլոգիապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է վերցնել համապատասխանաբար 3-ական նմուշ:

Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման: Օգտակար հանածոյի լաբորատոր հետազոտությունները կկատարվեն «Անալիտիկ» ՓԲԸ փորձարկումների լաբորատորիայում, իսկ ապարի քիմիական և մինեռոլապետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել

համապատասխան դիտարկումներ՝ ջրաբեր հորիզոնների և գեոդինամիկ երևույթների առկայությունը պարզաբանելու համար:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան, նկարագրել դրանք, ուսումնասիրել ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ: Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Ուսումնասիրության աշխատանքների համար նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, տեխնիկական միջոցները տարածք են մտնելու արդեն իսկ գոյություն ունեցող ճանապարհներով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատաքնների ժամանակ կպահանջվի խմելու և տեխնիկական նպատակներով ջուր: Տեխնիկական նպատակով ջրօգտագործումը կիրականացվի ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո: Աշխատողների համար խմելու ջուրը կապահովվի շշալցված տարբերակով: Աշխատակիցների կենցաղային նպատակների, հանգստի և սննդի ընդունման համար անհրաժեշտ պայմանները կապահովվեն արտադրական հրապարակի տարածքում՝ արդեն իսկ կահավորված վագոն-տնակներում (հայցվող տարածքից մոտ 250մ հարավ-արևելք, Վեդի գետի հունային հատվածում շահագործվում է Վանաշենի ԱԿԽ հանքավայրը):

Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ժամանակավոր ազդեցություններ կդրսևորվեն մթնոլորտային օդի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա: Հայտում նախատեսված բնապահպանական միջոցառումները թույլ կտան նվազեցնել, կամ կանխարգելել շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները:

Ուսումնասիրվող տարածքում վնասակար գազերի և փոշու առաջացումները պայմանավորված կլինեն ավտոտրանսպորտի տեղաշարժով, քանի որ ավազի կուտակը՝ ջրերի կապիլյար ներծծման հաշվին գտնվում է խոնավ վիճակում, հետևաբար հետախուզահորերի և առուների անցման ժամանակ փոշի չի առաջանա:

Վեդի գետի վրա աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու կամ կանխելու նպատակով՝ տեղամասի սահմաններում տեխնիկական միջոցների տեղաշարժն ապահովվելու է նախապես տեղադրվող բետոնե սալերով, իսկ գարնանային ձնհալի կամ գետի վարարման ժամանակահատվածում աշխատանքները դադարեցվելու են:

Հողային ծածկույթի վրա կարճատև բացասական ազդեցություն կդրսևորվի հետախուզահորերի անցման ժամանակ: Հետախուզահորերի և առուների նմուշարկումից անմիջապես հետո կատարվելու է դրանց հետլցման աշխատանքներ, լանդշաֆտի վերականգնում: Նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծախսը գնահատվել է 147320 դրամ:

Ավազակուտակի հետախուզման աշխատանքների ժամանակ տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների և տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող առաջին կարգի աղմուկն ու թրթռումը ազդեցություն չեն ունենա հարակից բնակելի տարածքների վրա, քանի որ մոտակա՝ Վանաշեն բնակավայրը հայցվող տեղամասից գտնվում է 520մ հեռավորության վրա:

Ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում առաջացող թափոնները ներառում են՝ բանեցված շարժիչների յուղեր (15լ), բանեցված դիզելային յուղեր (20լ), չտեսակավորված կենցաղային աղբ (օրական 10կգ): Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում

ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանա, քանի որ հետախուզական փորվածքներից հանված ավազային նյութը՝ նմուշարկումից հետո ամբողջությամբ օգտագործվելու է հետլցման աշխատանքների ժամանակ:

Ընկերության կողմից հայցվող տարածքն, ինչպես նաև հարակից շրջանները չեն առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետ: Տարածաշրջանում առկա՝ «Գոռավանի ավազուտներ» արգելավայրը հայցվող տարածքից գտնվում է 1.0կմ հեռավորության վրա:

Համաձայն Հայտի տեղեկատվության դիտարկվող տարածքում բույսերի և կենդանիների ՀՀ կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելավայրեր և ապրելավայրերը չեն հայտնաբերվել, սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/կանխարգելման նպատակով Հայտում նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- ուսումնասիրվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման, մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքների բացառում /նշված աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքներում),
- կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- արտանետվող վնասակար նյութերի չեզոքացնող սարքերի /զտիչներ) տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- փոշենստեցման նպատակով ճանապարհի, հետախուզահորերի տարածքի ջրցան,
- Վեդի գետի պահպանության նպատակով՝ գետի երկայնքով 2.5մ լայնությամբ պաշտպանիչ բնամասի ապահովում և գետի հետ հատումն իրականացնել գոյություն ունեցող կամրջակներով,
- աղմուկի և թրթռումների մակարդակների վերահսկողություն,
- տեղամասի տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսատեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքները ներառում են՝ հետախուզման աշխատանքների ավարտից հետո լեռնային զանգվածի հետլցման աշխատանքներ, որոնք կատարվելու են ձեռքով, աշխատելու է 2 մարդ: Նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ծախսը գնահատվել է 147320 դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցման/չեզոքացման միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում: Դրանց իրականացման համար ընկերությունը նախատեսում է տրամադրել 1.34մլն.դրամ:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար Հայտում կարևորվել է՝ աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ շարժական կապի միջոցների ապահովումը, հետախուզական, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի պատրաստվածությունը, ինչպես նաև առաջին բուժօգնության միջոցների առկայությունը:

Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնց իրականացման ծախսերը գնահատվել են

560.0հազ. ՀՀ դրամ: Կենսաբազմազնության դիտարկումը կատավելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով: Վեդի գետի ջրերի մոնիթորինգն իրականացվելու է մինչև տեղամասի տարածք և տեղամասի տարածքից հետո ընկած հավածում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Արարատի մարզպետարանը, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակ Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում և ստորև բերված փորձաքննական պահանջների կատարումն ապահովելու դեպքում շրջակա միջավայրի, մարդու առողջության և հնագիտական տարածքների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկանխարգելվեն, կամ կնվազեցվեն:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի և 32-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ մասի պահանջով, մասնավորապես՝

- բացառել ջրային ռեսուրսի հունը կամ ափերը փոփոխելը, ձևափոխելը կամ այլ կերպ օգտագործել, որի իրավունքը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին,
- գետային էկոհամակարգի հավասարակշռության պահպանման նպատակով **ապահովել** ջրային ռեսուրսների պահպանության ՀՀ օրենսդրական պահանջների կատարումը, բացառելով՝ ջրային ռեսուրսի աղտոտումը, վտանգավոր արտահոսքերի և թափոնների գետ հեռացնելը:

2. Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է ապահովել Հայտում նախատեսված՝ Վեդի գետի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը (գետի երկայնքով պաշտպանիչ բնամասի ապահովում, գետի հետ հատումն իրականացնել գոյություն ունեցող կամրջակներով և այլն) առաջնորդվելով՝ ՀՀ Կառավարության 20 հունվարի 2005 թվականի թիվ 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» որոշման պահանջներով:

3. Տեղամասերի տարածքներում ըստ անհրաժեշտության՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանության նպատակով «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:

4. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը: ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N191-Ն որոշման պահանջներին համապատասխան իրականացնել նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումներ և արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

5. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հերիքնազ Մկրտչյան